ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ (1971—1975)

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՍՄԿԿ XXIV համագումարը նախանշեց սովետական ժողովրդի բարեկեցության աճի լայն ծրագիր՝ այն սահմանելով որպես կուսակցության տնտեսական քաղաքականության բարձրագույն նպատակ։ 9-րդ հնգամյակի տարիներին (1971—1975) բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտներն աճեցին գրեթե մեկ քառորդով։ Բարելավվեցին 56 մլն մարդու բնակարանային պայմանները, 40%-ով աճեցին սպառման հանրային ֆոնդերից տրվող վճարումներն ու արտոնությունները[1]։ Կուսակցության սոցիալական քաղաքականության առավել խոշոր միջոցառումը նյութական արտադրության ճյուղերում բանվորների ու ծառայողների նվազագույն աշխատավարձի բարձրացումն էր ամսական մինչև 70 ռ.։ Այդ նպատակներով ծախսվեց ավելի քան 9 մլրդ ռ., մեկ տարվա հաշվով աճեցին ավելի քան 75 մլն մարդու եկամուտները[2]։

ՍՄԿԿ XXIV և XXV համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում արհմիությունները կուսակցության սոցիալական ծրագրի իրականացման ակտիվ մասնակիցներն էին։ Կենսագործելով ՍՄԿԿ XXIV համագումարի որոշումները, Հայաստանի արհմիությունները, պետական մարմինների հետ համատեղ, զգալի աշխատանք կատարեցին աշխատանքի կազմակերպման ու վարձատրման և աշխատավորների կենսաթոշակային ապահովության կատարելագործման ուղղությամբ։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության՝ «Բանվորների և ծառայողների ծերության կենսաթոշակի նվազագույն չափի բարձրացման մասին» և «Կոլտնտեսականների կենսաթոշակային ապահովության հետագա բարելավման միջոցառումների մասին» հրամանագրերի կապակցությամբ ՀԱՄԽ-ի նախագահությունը համակողմանի օգնություն էր ցույց տալիս սոցիալական ապահովության մարմիններին՝ կենսաթոշակների վերահաշվարկման աշխատանքները ժամանակին կատարելու գործում։ Նախագահության հատուկ որոշմամբ հսկողություն սահմանվեց այն բանի նկատմամբ, որ վերահաշվարկը կատարվի յուրաքանչյուր այն կենսաթոշակառուի համար, ում վրա տարածվում էին կենսաթոշակի նվազագույն չափի բարձրացման վերաբերյալ հրամանագրերը, որպեսզի նրան հասնող կենսաթոշակը վճարվի սահմանված ժամկետներում[3]։ 9-րդ հնգամյակի տարիներին Հայաստանում կենսաթոշակների և նպաստների չափերի ավելացման շնորհիվ աճեցին 190 հազար մարդու եկամուտները։ Ծերության կենսաթոշակները 1971 թ. համեմատությամբ ավելացան 24, իսկ հաշմանդամության կենսաթոշակները՝ 52,4%-ով[4]։

Առաջնորդվելով Հայաստանի կոմկուսի Կենտկոմի ու հանրապետության կառավարության ցուցումներով արհմիութենական կազմակերպությունները նշանակալի բացատրական աշխատանք կատարեցին կոլեկտիվներում, ուժե-

---

1 «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», Երևան, 1976, էջ 54։

2 «История профсоюзов СССР», М., 1979, с. 232.

3 ՀԱՄԽ-ի միացյալ արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 6, թ. 6։

4 Նույն տեղում, գ. 125, թ. 289։

դացվեց հսկողությունը հիվանդաթերթիկների ներկայացման և նպաստների վճարման նկատմամբ[5]։

Իրականացնելով ՍՄԿԿ XXIV համագումարի դիրեկտիվները, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը 1974 թ. սեպտեմբերի 25-ին հրամանագիր ընդունեց «Կարիքավոր ընտանիքների երեխաների համար նպաստներ սահմանելու մասին»։ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի որոշմամբ կուսակցական և արհմիութենական կազմակերպություններն իրականացրին բացատրական լայն աշխատանք՝ պարզաբանելով ընդունված որոշման նշանակությունն ու բովանդակությունը։ Հոկտեմբերի 15-ին հանրապետության ձեռնարկություններում ու կազմակերպություններում ստեղծվեցին նպաստներ նշանակող հատուկ հանձնաժողովներ, արհմիութենական մարմինների կողմից հսկողություն սահմանվեց նպաստների նշանակման և վճարման նկատմամբ[6]։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում, իրականացնելով կուսակցության որոշումները, Հայաստանի ձեռնարկությունների և հիմնարկների կուսակցական ու արհմիութենական կազմակերպությունները պլանաչափ աշխատանք էին կատարում աշխատավորների աշխատավարձի վճարման կազմակերպումը կատարելագործելու ուղղությամբ։ Ձեռնարկությունների կուսակցական և արհմիութենական կազմակերպությունները մշակեցին և իրականացրին մի շարք միջոցառումներ՝ նպատակ ունենալով բանվորներին ու ծառայողներին ծանոթացնել աշխատավորների աշխատավարձի բարձրացման վերաբերյալ կուսակցության և կառավարության որոշումներին։ Սակայն որոշ ձեռնարկություններում թերություններ կային բանվորների ու ծառայողների աշխատավարձի վճարման գործում։ Այսպես, Հայաստանի արհմիությունների խորհուրդը պարզեց, որ հայգյուղտնտեխնիկայի Սևանի և Հրազդանի շրջանային միավորումներում զբաղող բանվորների աշխատանքը վարձատրվում էր սահմանվածից ցածր տարիֆներով։ Արհմիությունների խորհրդի նախագահությունն անհապաղ միջոցներ ձեռնարկեց Սևանի ու Հրազդանի շրջանների գյուղտնտեխնիկայի աշխատողների աշխատավարձը ճիշտ հաշվարկելու և ժամանակին վճարելու ուղղությամբ[7]։

Կուսակցությունը մեծ ուշադրություն է նվիրում բանվորների և ծառայողների աշխատանքի պահպանության հարցերին։ 9-րդ հնգամյակի տարիներին մեր երկրում աշխատանքի պայմանների և պահպանության բարելավման համար նախատեսված պետական հատկացումները 8-րդ հնգամյակի համեմատությամբ աճեցին 40%-ով և կազմեցին շուրջ 15 մլրդ ռ.[8]։ ՀԿԿ XXVI համագումարում նշվեց, որ Հայաստանի կոմկուսի Կենտկոմը, աշխատանքի պահպանության հարցերը համարելով հանրապետության արհմիությունների գործունեության մեջ հիմնականներից մեկը, բազմիցս աշխատանքի պահպանության և այդ ուղղությամբ արհմիությունների գործունեության հետ կապված հարցեր է քննարկել Կենտկոմի պլենումներում ու բյուրոներում, կուսակցության քաղաքային և շրջանային կոնֆերանսներում, կուսակցության քաղկոմների ու շրջկոմների պլենումներում և բյուրոներում, սկզբնական կուսակցական կազմակերպություններում։ Համագումարում նշվեց, որ 9-րդ հնգամյակի տարիներին զգալիորեն աճել են աշխատանքի պահպանության միջոցառումների համար նախատեսված պետական հատկացումները։ 65 մլն ռ. էր ներդրվել բանվորների և ծառայողների աշխատանքի պահպանության միջոցառումների համար, որի շնորհիվ արտադրական տրավմատիզմը հանրապետությունում նվազեց երեք անգամ[9], այն դեպքում, երբ այն 8-րդ հնգամյակի ըն-

---

5 Նույն տեղում, ց. 3, գ. 104, թ. 151։

6 Նույն տեղում, գ. 7, թ. 7։

7 Նույն տեղում, գ. 104, թ. 51—53։

8 «Советские профсоюзы», 1976, № 3, с. 33.

9 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվ (այսուհետև ՍԼԻ ՀՄԿԱ), ֆ. 1, ց. 118, գ. 19, թ. 198։

բացքում իշել էր երկու անգամ[10]։ Կատարելով ՀԿԿ Կենտկոմի ցուցումները, հանրապետության արհմիութենական կազմակերպությունները զգալի աշխատանք կատարեցին բանվորների և ծառայողների աշխատանքի պահպանության ուղղությամբ, ժամանակին ձեռնարկվեցին գործուն միջոցներ՝ նպատակ ունենալով նվազեցնել արտադրական տրավմատիզմը, տարածել այն ձեռնարկությունների առաջավոր փորձը, որտեղ բանվորների և ծառայողների աշխատանքի պահպանության հարցերը դրված էին պատշաճ բարձրության վրա։

Հայաստանի արհմիությունների XIV համագումարում (1972 թ. փետրվարի 1—2) նշվեց, որ ՀԱՄԿԽ-ի 9-րդ պլենումի որոշումների համաձայն հանրապետության մի շարք մինիստրություններ ու գերատեսչություններ, ճյուղային արհմիությունների հանրապետական կոմիտեների հետ համատեղ, մշակել և իրականացնում են աշխատանքի պայմանների բարելավման, ձեռքի ծանր աշխատանքի մեքենայացման կոմպլեքսային միջոցառումների 1971—1975 թթ. պլանները, որին ակտիվ մասնակցել են ֆաբրիկագործարանային տեղական կոմիտեների աշխատանքի պահպանության հանձնաժողովները ու հասարակական տեսուչները[11]։ Բանվորների ու ծառայողների աշխատանքի պահպանության հետ կապված հարցերը պարբերաբար քննարկվում էին Հայաստանի արհմիությունների խորհրդի նախագահության պլենումներում և նիստերում։ Արհխորհրդի 13-րդ պլենումում (1971 թ. մայիսի 11) մատնանշվեց աշխատանքային օրենսդրության կատարման, աշխատանքի կազմակերպման և պահպանության գործերի անբավարար վիճակը Երևանի տպարաններում։ Ընդգծվեց, որ ռիթմիկ աշխատանքի բացակայության հետևանքով քաղաքի տպարաններում աշխատում են նաև արտաշխատանքային ժամերին, այն դեպքում, երբ աշխատաժամանակի պարապուրդները նույնպես խիստ զգալի են։ Այսպես, օրինակ, Երևանի պոլիգրաֆիական կոմբինատում 1971 թ. առաջին եռամսյակի պարապուրդները կազմել էին 2125 ժամ, իսկ արտաժամյա աշխատանքը՝ 3971 ժամ, որից 2500 ժամը՝ գործարկոմի թույլտվությամբ։ Պլենումը կուլտուրայի աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեին հանձնարարեց ամենակարճ ժամկետում պատշաճ միջոցներ ձեռնարկել նման փաստերը կանխելու համար[12]։

Հայաստանի արհմիությունների XIV համագումարում նշվեց, որ մեծ չափերի է հասնում դժբախտ պատահարների թիվը հանրապետության գյուղատնտեսության սիստեմում։ Միայն 1971 թ. առաջին կիսամյակում հանրապետությունում տեղի ունեցած բոլոր դժբախտ պատահարների 21%-ը բաժին էր ընկնում գյուղատնտեսությանը[13]։ Բնականաբար, նման իրավիճակը մեծ անհանգստություն էր առաջացնում կուսակցական և արհմիութենական կազմակերպություններում՝ սկսած սկզբնական կազմակերպություններից և վերջացրած ՀԿԿ Կենտկոմով և արհմիությունների կենտրոնական խորհրդով։ Գյուղատնտեսության բանվորների և ծառայողների աշխատանքի պահպանության հետ կապված հարցերը սկսեցին ավելի հաճախ քննարկվել կուսակցական և պետական մարմիններում։ 9-րդ հնգամյակի տարիներին այդ ուղղությամբ իր աշխատանքը զգալիորեն ակտիվացրեց գյուղատնտեսության և մթերումների բանվորների ու ծառայողների արհմիության հանրապետական կոմիտեն։ Հայաստանի արհմիութենական կազմակերպությունների համար գործողության ուղեցույց ծառայեց ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի և ՀԱՄԿԽ-ի 1971 թ. ապրիլի 14-ի՝ «Գյուղատնտեսության մեջ աշխատանքի պայմանների բարելավման և մեխանիզատորական կադրերի ամրացման միջոցառումների մասին» որոշումը։ Որոշմամբ նախատեսված միջոցառումների կատարման շնորհիվ մեխանիզատորական կադրերի հոսունությունը նշանակալիորեն նվազեց և բարելավվեցին ոչ միայն մեխանիզատորների, այլև գյու-

10 ՀԱՄԿԽ-ի միացյալ արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 86, թ. 31։

11 Նույն տեղում, թ. 32։

12 Նույն տեղում, գ. 69, թ. 33—34։

13 Նույն տեղում, գ. 96, թ. 34։

զատնտեսության աշխատողների մյուս ջոկատների աշխատանքի պայմանները։ Գյուղատնտեսության մեջ արտադրական տրավմատիզմը 9-րդ հնգամյակի տարիներին նվազեց 67%-ով[14]։ Դրան նպաստեցին մի շարք միջոցառումներ, որոնց թվում վճռական դեր խաղաց սկզբնական կուսակցական կազմակերպությունների կողմից աշխատանքի պահպանության հանձնաժողովների գործունեության, հասարակական տեսուչների աշխատանքի հաջող ղեկավարումը, ամենօրյա աշխատանքում նրանց ցույց տրվող օգնությունը։

Ինչպես հայտնի է, թունաքիմիկատների օգտագործումը դարձել է գյուղատնտեսական արտադրությունը հաջողությամբ վարելու պայմաններից մեկը։ Սակայն թունաքիմիկատների լայն կիրառումը պահանջում է կատարել անվտանգության տեխնիկայի կանոնները՝ դրանց պահպանման, փոխադրման և օգտագործման ժամանակ։ 9-րդ հնգամյակի տարիներին Հայաստանում կառուցվեցին թունաքիմիկատների պահպանման նոր տիպային պահեստներ, ներդրվեցին մարդկային օրգանիզմի համար սակավ վտանգավոր թունաքիմիկատներ, աշխատանքային շատ պրոցեսներ մեքենայացվեցին։ Արհմիությունների հանրապետական խորհուրդը 1973 թ. հունիսի 5-ին ուսումնասիրեց թունաքիմիկատների օգտագործման վիճակը Հայկական ՍՍՀ Արտաշատի և Կամոյի շրջաններում։ Այդ առթիվ խորհրդի ընդունած որոշման մեջ նշվում էին հաջողություններն ու թերությունները և տրվում հանձնարարականներ՝ թունաքիմիկատների օգտագործման ժամանակ անվտանգության տեխնիկան բարձրացնելու նպատակով[15]։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում անվտանգության տեխնիկայի պահպանման մակարդակի բարձրացումը բացատրվում էր նաև որակյալ կադրերի նշանակալից ավելացմամբ։ Եթե մինչև 1971 թ. Հայաստանում գործում էին միայն գյուղական 2 պրոֆտեխուսումնարան, որոնք տարեկան տալիս էին 250—300 շրջանավարտ, ապա հնգամյակի վերջին գյուղական պրոֆտեխուսումնարանների թիվը հասավ 12-ի, որտեղ սովորողների ընդհանուր թիվը կազմում էր 4.500 մարդ (անասնապահական ֆերմաների ապագա մեխանիզատորներ, վարորդներ, փականագործներ, տրակտորիստներ, մեքենավարներ և այլն)[16]։

Այդ տարիներին աշխատանքի անվտանգ պայմանների ստեղծման գործում կարևոր և հրատապ խնդիրներ էին ծառացել նաև Հայաստանի էլեկտրակայանների և էլեկտրատեխնիկական արդյունաբերության բանվորների արհմիության հանրապետական կոմիտեին ենթակա արհմիութենական կազմակերպությունների առջև։ Ճյուղի ձեռնարկությունների կողմից իրականացվում էր Հայաստանի ատոմային էլեկտրակայանի, Հրազդանի ՀԷԿ-ի, Որոտանի հիդրոէլեկտրակայանների կասկադի, Արփա-Սևան հիդրոտեխնիկական համալիրի շինարարությունը, գործող ջերմային ու հիդրավլիկ էլեկտրակայանների և էլեկտրական ցանցերի շահագործումը, թողարկվում էր էլեկտրատեխնիկական արտադրանք։ Հնգամյակի տարիներին Հայաստանի էներգետիկայի և էլեկտրատեխնիկական արդյունաբերության ձեռնարկություններում մասնագետների և արհմիութենական ակտիվիստների լայն մասնակցությամբ մշակվեցին աշխատանքի պայմանների և պահպանության բարելավման կոմպլեքսային պլաններ, որոնցում արտացոլվեցին աշխատատար աշխատանքների ավտոմատացման և մեքենայացման, արտադրության կուլտուրայի բարձրացման հետ կապված մի շարք հարցեր։ Պլաններ կազմվեցին հնգամյակի յուրաքանչյուր տարվա համար։ ՀԱՄԿԽ-ի օրգան «Սովետսկիյե պրոֆսոյուզի» հանդեսը գրեց կոմպլեքսային պլանների մշակման և ներդրման ուղղությամբ մեր հանրապետության մի շարք ձեռնարկությունների աշխատանքի առաջավոր

---

14 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ), ֆ. 878, ց. 2, գ. 18, թ. 154։

15 «Տեղեկագիր Հայաստանի արհեստակցական միությունների խորհրդի», № 3, Երևան, 1979, էջ 13—16։

16 ՀՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 878, գ. 18, թ. 146։

փորձի մասին[17]։ Հանդեսը մասնավորապես բերել էր «Հայէլեկտրալույս» արտադրական միավորման գլխամասային ձեռնարկության՝ Երևանի էլեկտրալամպերի գործարանի օրինակը։ Կոմպլեքսային պլանն այդ ձեռնարկությունը հաջողությամբ էր կատարում. իրականացվել էին այնպիսի խոշոր միջոցառումներ, ինչպես սառը լուսարձակման արտադրամասի կոյուղային սիստեմի վերակառուցումը, լրացուցիչ կառուցվել և վերակառուցվել էին մի շարք օդափոխիչ սիստեմներ, բարելավվել էին կենցաղային շենքերը։ Սակայն բոլոր ձեռնարկություններում չէ, որ բանվորների և ծառայողների աշխատանքի պահպանության հարցերը գտնվում էին պատշաճ բարձրության վրա։ Այսպես, Լենինականի սառնարանային կոմպրեսորների գործարանում եռահարկ գործարանային մասնաշենքի պատուհանների ապակիների մեծ մասը կոտրված էր։ Դրոշմահատման-մթերման, ինչպես նաև մյուս բոլոր արտադրամասերում տեղական լուսավորության լամպերը չունեին պաշտպանական ցանցեր։ Տաք զալարատաշեղները դիպչում էին լամպին՝ լցվելով ռեֆլեկտորի մեջ, այն դեպքում, երբ բանվորի դեմքը շատ մոտ էր գտնվում, որի հետևանքով յուրաքանչյուր րոպե կարող էր տեղի ունենալ դժբախտ պատահար։ Գործարանում ուիրող իրավիճակի մասին հանդես եկավ «Օխրանա տրուդա ի սոցիալնոյե ստրահովանիե» ամսագիրը[18]։ Դրանից հետո հարցը քննարկվեց Հայաստանի կոմկուսի Լենինականի քաղկոմում։ Ձեռնարկության ղեկավարությանը, կուսակցական և արհմիութենական կոմիտեներին հանձնարարվեց ամենակարճ ժամանակում վերացնել այդ թերությունները։

ՍՄԿԿ XXVI համագումարի նախանշած՝ աշխատավորների նյութական բարեկեցության բարձրացման սոցիալական ծրագրում, մեծ ուշադրություն էր նվիրվում աշխատավորների բնակարանային-կենցաղային պայմանների բարելավմանը։ Իրագործելով կուսակցության որոշումները, Հայաստանի արհմիութենական կազմակերպություններն ուսումնասիրվող ժամանակաշրջանում որոշակի ուշադրություն էին նվիրում բնակարանային շինարարության պլանների կատարմանը, առևտրի և կենցաղային սպասարկման ձեռնարկությունների աշխատանքի բարելավմանը։ Բնակարանային շինարարության հետ կապված հարցերը քննարկվում էին Հայաստանի արհմիությունների խորհրդի նախագահության պլենումներում ու նիստերում և ճյուղային արհմիությունների հանրապետական կոմիտեների կողմից։ Արհմիութենական որոշ կազմակերպություններ հասարակական վերահսկողություն էին սահմանում բնակարանային-կենցաղային շինարարության ընթացքի և որակի նկատմամբ։ Սակայն, ամբողջությամբ վերցրած, բնակարանային-կենցաղային շինարարության և բնակարանների բաշխման վերահսկողության ուղղությամբ հանրապետական արհմիությունների գործունեությունը գոհացուցիչ չէր։ Հայաստանի արհմիութենական կազմակերպությունները բավականաչափ լայնորեն չէին օգտագործում այն միջոցների հարուստ զինանոցը, որ իրենց տրամադրության տակ ունեն աշխատավորների ամենամասսայական կազմակերպություններն այդ կարևորագույն գործում։ 9-րդ հնգամյակի տարիներին մի շարք դեպքերում բնակելի շենքերի շինարարության և գործարկման պլանը չէր կատարվում, ծայրաստիճան ցածր էր մնում որակը։ ՀԿԿ Կենտկոմի հունվարյան պլենումը (1975 թ. հունվարի 30—31) անդրադարձավ այդ հարցին։ Պլենումում նշվեց, որ բնակարանային կոոպերատիվ շինարարության և բնակարանների ճիշտ բաշխման գործում մեծ խնդիրներ են ծառացած արհմիութենական մարմինների առջև։ Պլենումի նյութերում ընդգծվում էր, որ արհմիությունների հանրապետական խորհուրդը, ճյուղային արհմիությունների հանրապետական կոմիտեները պետք է մասսայական բանվորական վերահսկողություն կազմակերպեն բնակարանների բաշխման և դրանց օգտագործման նկատմամբ։ Ձեռնարկությունների և հիմնարկների սկզբնական կուսակցական և արհմիութենական կազմակերպությունները պետք է հատուկ հաշվառում և հսկողություն սահմանեն տեղերում բնակարանների ճիշտ բաշխման նկատ-

17 «Советские профсоюзы», 1974, № 8, с. 36—37.

18 «Охрана труда и социальное страхование», 1974, № 11, с. 35—36.

մամբ[19]։ Հունվարյան պլենումից հետո աշխատանքը բնակարանային շինարարության և բնակարանների ճիշտ բաշխման ուղղությամբ նկատելիորեն բարելավվեց, և 10-րդ հնգամյակի ցուցանիշները բնակարանային-կենցաղային շինարարության բնագավառում զգալիորեն ավելի բարձր էին։

Հասարակական սննդի հաջող կազմակերպումը աշխատավորների կենցաղը կոմունիստական հիմունքներով վերակառուցելու կարևորագույն պայմաններից է։ Կուսակցությունն արհմիությունների առջև պատասխանատու խնդիր է դնում՝ գործուն վերահսկողություն իրականացնել հասարակական սննդի ցանցի նկատմամբ, ըստ ամենայնի նպաստել ձեռնարկություններում հասարակական սննդի բարելավմանը։ 1972 թ. հունիսի 22-ին ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը համատեղ որոշում ընդունեցին «Հասարակական սննդի հետագա բարելավման մասին»։ Այդ որոշմամբ նախատեսվում էր ճաշարանների ցանցի զարգացում, հասարակական սննդի ձեռնարկությունների ապահովում ժամանակակից տեխնոլոգիական, առևտրական սարքավորումներով, սպասարկման նոր ձևերի զարգացում և այլ միջոցառումների իրականացում։ Հատուկ ուշադրություն էր դարձվում հասարակական սննդի զարգացմանը գյուղական վայրերում։ Որոշման ընդունումից հետո գյուղական վայրերում բացվեցին 29 նոր բանվորական ճաշարաններ՝ 1149 տեղով։ Հասարակական սննդի օբյեկտների աշխատանքը իր ուշադրության կենտրոնում էր պահում գյուղատնտեսության և մթերումների բանվորների ու ծառայողների արհմիության հանրապետական կոմիտեն։ 1971 թ. հունվարին հանրապետական կոմիտեի նախագահությունը քննարկեց Էջմիածնի շրջանի հասարակական սննդի ձեռնարկությունների նկատմամբ արհմիութենական մարմինների վերահսկողության հարցը։ 1973 թ. մայիսին քննարկվեց հասարակական սննդի վիճակը Մարտունու շրջանի սովխոզներում։ Արհմիությունների հանրապետական կոմիտեի նախագահությունը 1974 թ. փետրվարին քննարկեց հայգյուղտնտեխնիկայի ճաշարանային ձեռնարկությունների, իսկ դեկտեմբերին՝ հայկական գյուղատնտեսական և Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտների, ինչպես նաև հիդրոմելիորատիվ տեխնիկումի արհմիության տեղական կոմիտեների աշխատանքը հասարակական սննդի օբյեկտների գործունեության վերահսկողության ուղղությամբ։ 1975 թ. ապրիլին քննարկվեց հասարակական սննդի ձեռնարկությունների աշխատանքի բարելավման հարցը՝ գյուղատնտեսության և մթերումների բանվորների ու ծառայողների արհմիության հանրապետական կոմիտեի 9-րդ պլենումի որոշումների լույսի ներքո։ Կուսակցության և կառավարության որոշումների կենսագործման ուղղությամբ կատարված աշխատանքի շնորհիվ 9-րդ հնգամյակի տարիներին գյուղական վայրերում հասարակական սննդի ձեռնարկությունների աշխատանքը նշանակալիորեն բարելավվեց[20]։

Սոցիալական ապահովագրությունն ընդգրկում է ժողովրդի կյանքի կարևորագույն կողմերը։ Այն աշխատավորներին երաշխավորում է նյութական ապահով ծերություն, օգնություն ժամանակավոր անաշխատունակության ժամանակ, ներառում է աշխատավորների առողջության պահպանության մի խումբ միջոցառումներ։ 9-րդ հնգամյակի տարիներին արհմիությունների հանրապետական խորհրդի սոցիալական ապահովագրության բյուջեն աճեց 71,4%-ով, հասնելով 120 մլն ռ.։ Հինգ տարվա ընթացքում սոցիալական ապահովագրության եկամուտները կազմեցին 456 մլն 709 հազ. ռ., որը 43%-ով ավելի է, քան 1967—1971 թթ. ընթացքում[21]։ 9-րդ հնգամյակն իրեն հավասարը չի ունեցել առողջարանների, հանգստյան տների, տուրիստական բազաների, մարդահամալիրների շինարարության համար հատկացված միջոցներով։ Ինչպես նշվեց ՀԿԿ XXV համագումարում, այդ նպատակներով հանրապետությունում հատկացվել են 80 մլն ռ. կապիտալ ներդրումներ՝ 8-րդ հնգ-

19 ՄԱԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 111, գ. 76, թ. 33։

20 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 578, ց. 2, գ. 18, թ. 54—60։

21 ՀԱՄԽ-ի միացյալ արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 125, թ. 290։

գամյակի 12 մլն-ի դիմաց[22]։ 9-րդ հնգամյակի ընթացքում սոցիալական ապահովագրության միջոցների հաշվին կամ մասնակի վճարումով միութենական ու հանրապետական առողջարաններում, պրոֆիլակտորիումներում, հանգստյան տներում և տուրիստական բազաներում բուժվեցին կամ հանգստացան 345 հազ. բանվոր ու ծառայող՝ գրեթե 2,8 անգամ ավելի, քան 8-րդ հնգամյակի տարիներին։ 9-րդ հնգամյակի վերջին հանրապետության ձեռնարկություններում ու հիմնարկներում գործում էր ամբողջ տարին աշխատող և սեզոնային 28 պանսիոնատ՝ 2500 մահճակալատեղերով, որտեղ տարեկան հանգստանում էին 15 հազար բանվոր ու ծառայող և նրանց ընտանիքների անդամներ[23]։ Հնգամյակի տարիներին շարք մտավ Հանքավանի առողջարանի առաջին հերթը (3000 տեղ), ավարտվեց Կիրովականի, Արզնիի և Ջերմուկի նոր առողջարանների բազմահարկ շենքերի շինարարությունը, շահագործման հանձնվեցին Սևանի, Վարդենիսի, Ծաղկաձորի, Մարտունու, Լոռիի, Ֆիոլետովոի հանգստյան տների նոր շենքերը։ Շարունակվում էր տուրիստական համալիրների շինարարությունը Երևանում, Սևանում, Դիլիջանում, Լենինականում, Ստեփանավանում ու Իջևանում։

Բանվորների և ծառայողների հանգստի պայմանների բարելավման ուղղությամբ մեծ աշխատանք կատարեց Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը։ Ինստիտուտի աշխատակիցների համար Ծաղկաձորում կառուցվեց հիանալի պանսիոնատ։ Բացի այդ, 9-րդ հնգամյակի տարիներին շահագործման հանձնվեց երեք բնակելի տուն, 1000 տեղանոց ճաշարան և ինստիտուտի աշխատակիցների երեխաների համար պիոներական ճամբար՝ Ծաղկաձորում[24]։

Աշխատավորների սանատոր-կուրորտային սպասարկման բարելավման գործում հանրապետության կուսակցական և արհմիութենական կազմակերպությունների խնդիրները սահմանվեցին ՀԿԿ Կենտկոմի 1973 թ. հոկտեմբերի 2-ի որոշմամբ։ Կատարելով այդ որոշումից բխող խնդիրները, Հայաստանի արհմիությունների խորհուրդը որոշակի աշխատանք ծավալեց առողջարանների, հատկապես բժշկական անձնակազմի կոմպլեկտավորման բարելավման ուղղությամբ։ Վերացվեցին համատեղության կարգով աշխատելու իրավունքի մասին օրենքի խախտման փաստերը[25]։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում բանվորների ու ծառայողների առողջության պահպանման և նրանց հանգստի կազմակերպման համար մեծ աշխատանք էին կատարում առողջարան-պրոֆիլակտորիումները։ Այդ ուղղությամբ նպատակամղված աշխատանք էին կատարել Լենինականի շինտրեստի, Քաջարանի մսի-կաթի կոմբինատի, Երևանի էլեկտրալամպերի գործարանի կուսակցական և արհմիութենական կոմիտեները։ Այդ ձեռնարկությունների նորակառույց առողջարան-պրոֆիլակտորիումներում իրենց հանգիստն անցկացրին և բուժվեցին շատ բանվորներ ու ծառայողներ։

9-րդ հնգամյակում հանրապետությունում ընդլայնվեց պիոներական ճամբարների ցանցը, ամրապնդվեց դրանց նյութական բազան, ավելի բազմազան դարձան դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման ձևերը։ Պիոներական մշտական ճամբարների թիվը հանրապետությունում ավելացավ՝ 75-ից հասնելով 98-ի[26]։ Հնգամյակի տարիներին շահագործման հանձնվեցին կուլտուրայի աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեի՝ Աղվերանի պիոներական ճամբարի 350 տեղանոց շենքը, Լենինականի գուլպայի ֆաբրիկայի «Արբանյակ» և Հայկոոպի «Ջեփյուռ» պիոներական ճամբարների նոր. ննջամասնաշենքերը։

Արհմիությունների հանրապետական խորհուրդը, ՀԼԿԵՄ Կենտկոմի բյու-

22 «Коммунист», 28.II.1971.

23 ՀԱՄԽ-ի միացյալ արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 125, թ. 290։

24 Նույն տեղում, գ. 99, թ. 16։

25 Նույն տեղում, գ. 105, թ. 14։

26 Նույն տեղում, գ. 125, թ. 305։

րոյի հետ համատեղ, ամեն տարի հանրագումարի էր բերում պիոներական ճամբարների աշխատանքի արդյունքները։ Պիոներ-դպրոցականների հայրենասիրական, ինտերնացիոնալ, գեղագիտական, աշխատանքային և ֆիզիկական դաստիարակության ուղղությամբ մեծ աշխատանք կատարեց անտառանյութի, ցելյուլոզայի և փայտամշակման արդյունաբերության բանվորների արհմիության հանրապետական կոմիտեի «Հայկական արտեկ» պիոներական ճամբարը։ Այնտեղ հանգստանում էին պիոներներ ու դպրոցականներ՝ մեր երկրի տարբեր հանրապետություններից, ինչպես նաև նրանց հասակակիցներն արտասահմանյան երկրներից։ 1972 թ. անտառանյութի, ցելյուլոզայի և փայտամշակման արդյունաբերության բանվորների արհմիության հանրապետական կոմիտեի որոշմամբ հանդիսավորությամբ նշվեց «Հայկական արտեկի» 20-ամյակը։ Այդ առթիվ հանրապետական կոմիտեի ընդունած որոշման մեջ նշվում էր, որ 20 տարվա ընթացքում ճամբարում հանգստացել է 27000 երեխա։ «Հայկական արտեկը» դարձել է հանրապետության պիոներների և դպրոցականների ինտերնացիոնալ և հայրենասիրական դաստիարակության իսկական կենտրոն[27]։ Այն կարևորագույն խնդիրների թվում, որ կոմունիստական կուսակցությունը դրել է արհմիությունների վրա, հատուկ տեղ է գրավում մեր երկրի աշխատավորների ֆիզիկական դաստիարակության կազմակերպումը։ Ֆիզկուլտուրային շարժման ասպարեզում արհմիությունների աշխատանքի համար գործողությունների ընդարձակ ծրագիր են կուսակցության և կառավարության որոշումները։ Առաջնորդվելով այդ որոշումներով, Հայաստանի արհմիութենական սպորտային ընկերությունները մեծ աշխատանք էին կատարում աշխատավորների ֆիզիկական դաստիարակության ուղղությամբ։ 9-րդ հնգամյակի տարիներին այդ ընկերություններում ու մարզական ակումբներում պատրաստվեց 14 միջազգային կարգի սպորտի վարպետ, 241 ՍՍՀՄ սպորտի վարպետ, 887 վարպետության թեկնածու, 1267 առաջին կարգային։ Կամավոր մարզական ընկերությունների և արհմիութենական կազմակերպությունների տրամադրության տակ էին 12 մարզադաշտ, 121 մարզադահլիճ, 22 լողավազան, տարբեր մարզաձևերի 954 խաղահրապարակ։ Հանրապետությունում գործում էր 26 արհմիութենական մարզադպրոց[28]։

Աշխատավորների ֆիզիկական դաստիարակության ուղղությամբ Հայաստանի արհմիությունների աշխատանքում կարևոր տեղ էր գրավում ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1972 թ. ապրիլի 12-ի՝ «Պատրաստ աշխատանքին և ՍՍՀՄ պաշտպանությանը» ֆիզկուլտուրային համամիութենական նոր համալիրի կիրառման մասին» որոշման իրականացումը։ Որոշման ընդունումից հետո արհմիությունների հանրապետական և տեղական կոմիտեներն ու կամավոր ընկերությունների խորհուրդներն անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեցին ՊԱՊ համամիութենական համալիրի ներդրման ուղղությամբ։ Անցկացվեց պրոպագանդիստական լայն կամպանիա՝ նորմաների մասսայական ուսումնասիրման և հանձնման նպատակով։ Ֆիզկուլտուրային բոլոր կոլեկտիվներում ու մարզական ակումբներում 1972 թ. մարտ-ապրիլ ամիսներին հրավիրվեցին ֆիզկուլտուրիկների ընդհանուր ժողովներ՝ նոր համալիրի էության պարզաբանման նպատակով։ Ձեռնարկություններում, արհմիությունների ֆաբրիկագործարանային տեղական կոմիտեներին առընթեր, ստեղծվեցին ՊԱՊ համալիրի ներդրման հատուկ հանձնաժողովներ։ Իրականացված միջոցառումները պատշաճ արդյունքներ տվեցին և 9-րդ հնգամյակի տարիներին Հայաստանում 134 հազար մարդ կատարեց ՊԱՊ համալիրի նորմաները[29]։

Հայաստանի արհմիութենական ընկերությունների մարզիկները ակտիվ մասնակցություն ունեցան ՍՍՀՄ ժողովուրդների 5-րդ սպարտակիադային։ Եզրափակիչ մրցումներին մասնակցած արհմիութենական մարզական ընկե-

---

27 ՀՍՍՀ ՀԱՄԾ ՊԿԱ, ֆ. 389, ց. 2, գ. 5, թ. 226—232։

28 ՀԱՄԽ-ի միացյալ արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 125, թ. 303։

29 Նույն տեղում։

ությունների 163 մարզիկներ նվաճեցին հանրապետության մարզական պատվիրակության վաստակած միավորների 40%-ը։ «Սպարտակ» և «Բուրեվեստնիկ» կամավոր մարզական ընկերությունների 5 մարզիկներ արժանացան մրցանակային տեղերի՝ նվաճելով 2 ոսկե, 2 արծաթե և մեկ բրոնզե մեդալ[30]։

Հայաստանի կուսակցական և արհմիութենական կազմակերպությունների կողմից որոշակի աշխատանք տարվեց ի կատարումն ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի և ՀԱՄԿՄ-ի 1969 թ. մայիսի 30-ի՝ «Երկրում տուրիզմի և էքսկուրսիաների հետագա զարգացման միջոցառումների մասին» որոշման։ Այդ որոշմամբ նախատեսվում էր տուրիստական-էքսկուրսիոն գործի հետագա զարգացումը, տուրիզմի նյութական բազայի ամրապնդումը մեր Երկրում։ 9-րդ հնգամյակի տարիներին հանրապետության կուսակցական և արհմիութենական մարմինների նպատակամղված աշխատանքի շնորհիվ Հայաստանում իրականացվեցին մի շարք միջոցառումներ, որոնց հետևանքով նշանակալիորեն բարձրացավ տուրիստական ուղեգրերով հանրապետություն այցելող զրոսաշրջիկների, ինչպես նաև էքսկուրսիոն-տուրիստական միջոցառումների մասնակցող աշխատավորների թիվը։ Հնգամյակի եզրափակիչ տարում մեծապես բարձրացան Հայաստանում զրոսաշրջիկներ ընդունելու հնարավորությունները։ Էքսկուրսիոն-տուրիստական միջոցառումներին, ընդհանուր առմամբ, մասնակցեց 2 մլն մարդ[31]։

Այսպիսով 9-րդ հնգամյակի տարիներին Հայաստանի արհմիությունները զգալի դեր խաղացին հանրապետության տնտեսական վերելքի, աշխատավորության նյութական բարեկեցության աճի, աշխատանքի, կենցաղի ու հանգստի պայմանների բարելավման գործում և, դրանով իսկ, մեծ լումա ներդրեցին կուսակցության սոցիալական քաղաքականության իրագործման ասպարեզում։

ДЕЯТЕЛЬНОСТЬ ПРОФСОЮЗНЫХ ОРГАНИЗАЦИЙ АРМЕНИИ ПО ОСУЩЕСТВЛЕНИЮ СОЦИАЛЬНОЙ ПОЛИТИКИ ПАРТИИ (1971—1975)

РУБЕН МИРЗАХАНЯН

Резюме

В период между XXIV и XXV съездами КПСС профсоюзные организации Армении приняли активное участие в реализации социальной политики партии. Осуществляя решения XXIV съезда КПСС, профессиональные союзы республики проделали значительную работу по совершенствованию организации оплаты труда и пенсионного обеспечения трудящихся. Серьёзное внимание уделялось вопросам охраны труда рабочих и служащих. За годы девятой пятилетки на мероприятия по охране труда было внедрено 65 млн. рублей, производственный травматизм по республике снизился в три раза. Профсоюзными организациями республики осуществлялся деятельный контроль над сетью общественного питания. Определённая работа была проделана по контролю за жилищно-бытовым строительством, распределением квартир, улучшению работы предприятий торговли и бытового обслуживания, однако в целом деятельность профсоюзов республики в этой области была мало удовлетворительной. За годы девятой пятилетки бюджет социального страхования республиканского совета профсоюзов возрос на 71,4%, достигнув 120 млн. рублей. В изучаемый период расширилась сеть пионерских лагерей, укрепилась их материальная база. Большая работа по физическому воспитанию трудящихся была проделана профсоюзными спортивными обществами.

30 Նույն տեղում, ց. 2, ֆ. 63, թ. 7։

31 «Սովետական Հայաստան», 21. IX. 1975։